տուռի աւերակ, ուսմից ձորակ մի կիջնայ Պատուռայ (Կապուտայ Պատուռ) ջուր անուամբ, որ այս տափարակին հանելուն Պանամշա կը կոչուի։

Պանամշայից $^1/_2$ ժամ ի հիւսիս ջրի աջ եզրին վերայ բարձրացած է հռչակաւորն Կապուտ, բարձր և թիք ժայռի գլխին կառուցուած է, բերդի պարիսպն, որ կախուած է ջրի վերան։ Ջուրը մշտական բերդի յատակի ժայռը ծեծելով կանցնի։

Ջրի աջ եզրէն 200 մեթրի չափ ի հիւսիս արեւելս բարձրանանք նեղ և քայքայուած ճանապարհով մի, տեղ տեղ արհեստական ժայռերու բնական ձեղքերէ անցնելով՝ մտնենք բերդս, որ լայնքը մօտ 200 քայլի չափ ի հիւսիս, երկարութիւնը 800—1000 քայլի չափ յարևելս ժայռի մէջ երկարացած է։

Բերդի ներսն շրջապատուած է բարձր անմերձենալի ժայռերով, որք երկու կողմից ջրի վերան նեղնալով գլխից բերդիս բոլորշի ձև մի կտան որ և միայն արևմուտքէ նեղ բաց մի կը մնար ջրի վերան, ուր ևս պարիսպ մի հաստատուած է։

Բերդի ներսի կողմն մերձ պարսպին մի ժայռ է բարձրացած, որոյ գագաթն 10 մարդ պարունակելու չափ մի ամրոց է շինուած, սանդուխներն ժայռից են հանուած, այս ժայռի յատակի շրջապատը 25 և բարձրութիւնը 6 մեթր կը լինի։

Արտաքին (ներքին) բերդին ձևը ցոյց կտայ որ միմիայն ծառայած է ժողովուրդը պատսպարելու։

Իսկ բուն մարտկոցը ներքին բերդի ետևի ժայռերու գլխուն հաստատուած է, որ չափազանց բարձրութեան մի վերայ է և գրեթէ մեծ մասն ձորահովտէս կը տեսնուի։